ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԻՐԱՆՈՒՇ ՍԵՐՈԺԻ ՄԵԼԻՔՅԱՆ

ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ. ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԻԳ.00.02. - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

СИРАНУШ СЕРЕЖЕВНА МЕЛИКЯН

ВЗАИМООТНОШЕНИЯ ЦЕРКОВЬ-ГОСУДАРТСВО В ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССАХ РА: ВОПРОСЫ ДУХОВНОЙ БЕЗОПОСНОСТИ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

Ереван-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Մ. Քեռյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Փ. Ենգոյան**

քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ **Է. Ա. Քալանթարյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2021թ. սեպտեմբերի 24-ին, ժամը 13:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն» 056 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն է՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021թ. հուլիսի 9-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
պատմական գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Ս.Պետրոսյան

Тема диссертации утверждена в
Ереванском Государственном университете

Научный руководитель: доктор политических наук, профессор **Г. М. Керян**

Официальные оппоненты: доктор политических наук, профессор **А. П. Енгоян**
кандидат политических наук, доцент **Э. А. Калантарян**

Ведущая организация: **Российсково-Армянский университет**

Защита деццертации состоится 24-ого сентября 2021 г. в 13^{00} часов на заседании специализированного совета 056 “Политология” ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, Республика Армения.

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского госидартвенного университета.

Автореферат разослан 9-ого июля 2021 года.

Научный секретарь специализированного совета,
кандидат исторических наук, доцент В. С. Петросян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների դերն ու կարգավորման հիմնահարցը պետության, հասարակության քաղաքական համակարգում և գործընթացներում շարունակական հետազոտության թեմա է, քանի որ մշտապես փոփոխվող իրողությունները, ի հայտ եկող հիմնախնդիրներն ու լուծման ուղիների որոնումը գիտական հետազոտության պահանջի անհրաժեշտություն են առաջ բերում: Պետության և եկեղեցու փոխհարաբերությունների հարցն ուսումնասիրության առարկա է պատմության, փիլիսոփայության, մշակութաբանության, սոցիոլո-

գիայի, աստվածաբանության կողմից, իսկ թեման՝ որպես քաղաքագիտական հիմնահարց, հայաստանյան իրողությունների լույսի ներքո գիտականորեն քիչ ուսումնասիրված և շարունակական հետազոտություն ու վերլուծություն պահանջող ուղղություններից է:

Թեմայի քաղաքագիտական հետազոտությունը հիմնահարցի լիըմբռնման համար ելակետային է: Պետաեկեղեցական հարաբերությունների ուսումնասիրությունը քաղաքական գիտության շրջանակներում նոր մոտեցում է և հնարավորություն է տալիս թե՛ պետության, թե՛ հասարակության կյանքում վեր հանել երկու ինստիտուտների համագործակցությունն ու գործառութային շրջանակը, պետաեկեղեցական հարաբերությունների ձևավորման մշակույթն ու դրա ազդեցությունն արդի քաղաքական գործընթացների վրա: Հետազոտությունը գիատականորեն իմաստավորվում է պետաեկեղեցական հարաբերություններում առկա արդի և համակարգային խնդիրների և հնարավոր լուծումների ձևակերպման և վեր հանման տեսանկյունից:

Պետաեկեղեցական հարաբերությունների իրավաքաղաքական հիմնահարցերը, փոխհարաբերություններում առաջացած խնդիրներն ու դրանց լուծման ուղիները, ազգային անվտանգության մարտահրավերներին դիմակայելու տեսանկյունից երկու ինստիտուտների համագործակցությունը, փոխադարձ ազդեցության մեխանիզմները, համագործակցության շրջանակում առկա խնդիրները, եկեղեցի-բանակ արդի համագործակցությունը, հեռանկարները, եկեղեցու սոցիալական, կրթական, մշակութային քաղաքականությունը պետության կյանքում, հայաստանյան արդի իրողությունները, իշխող քաաղաքական վարչակարգի ազդեցությունը երկու ինստիտուտների փոխհարաբերությունների վրա այն առաջնային հիմնահարցերն են, որոնց մանրակրկիտ պարզաբանումը գիտական անհրաժեշտություն է և թեմայի ուսումնասիրությունն արդիական է դարձնում:

Այնուհանդերձ, արդի ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետություն-Հայ առաքելական եկեղեցի փոխհարաբերությունների շարունակական վերաիմաստավորումը, այդ փոխհարաբերությունների քաղաքաիրավական բովանդակության սահմանումը անհրաժեշտ են երկու ինստիտուտների գործունեության արդյունավետության բարձրացման, համապատասխան երաշխիքների ձևավորման, ազգային անվտանգության մի շարք մարտահրավերների դիմակայելու տեսանկյունից:

Վկայակոչված հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը ևս վկայում է ատենախոսության թեմայի արդիականության մասին:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել պետաեկեղեցական հարաբերությունների հա-

յաստանյան մոդելը, արդի գործընթացները, բացահայտել առկա խնդիրները, առանձնահատկությունները, վերոնշյալ հարաբերությունների զարգացման միտումներն ու հեռանկարները: Այս նպատակին հասնելու համար անդրադարձել ենք հետևյալ խնդիրներին՝

➢ Ուսումնասիրել քաղաքագիտական մտքի շրջանակներում առկա մոտեցումներն ու հայեցակարգերը եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների մասին:

➢ Վեր հանել եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների՝ գիտության մեջ առկա մոդելները:

➢ Բացահայտել եկեղեցու դերը միջազգային և հայաստանյան քաղաքացիական հասարակության կայացման ու ժողովրդավարության ամրապնդման ճանապարհին:

➢ Վերլուծության ենթարկել այն պատմական հենքը՝ որի վրա կառուցվել է Հայաստանի Հանրապետությունում պետաեկեղեցական հարաբերությունների արդի մոդելը:

➢ Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում պետաեկեղեցական հարաբերությունների արդի գործընթացներն ու իրողությունները:

➢ Ցույց տալ եկեղեցի եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հայաստանյան մոդելի առանձնահատկությունները:

➢ Ուսումնասիրել հոգևոր անվտանգության հայեցակարգը, սպառնալիքները, անդրադարձներն ազգային անվտանգության ռազմավարական փաստաթղթերում:

➢ Ներկայացնել, թե որոնք են Հայաստանի Հանրապետության հոգևոր անվտանգության արդի սպառնալիքները:

Հետազոտության տեսական ու մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության շրջանակներում օգտագործվել են ինչպես համագիտական, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդներ: Ընդհանուր գիտական մեթոդներից հիմնականում կիրառվել են համեմատական և նկարագրողական մեթոդները: Մասնավոր գիտական մեթոդներից օգտագործվել են համակարգայինը, կառուցվածքային-գործառնականը: Աշխատանքի նպատակներից ելնելով օգտագործվել է նաև փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը: Պատմականության սկզբունքի պահպանումը և կանխակալ դիրքորոշումների շրջանցումն ապահովել են հետազոտության եզրահանգումների ճշգրտությունը: Օգտագործվել են հիմնահարցի տարբեր ասպեկտները ուսումնասիրած նախորդ հեղինակների փորձը և նվաճումները:

Եկեղեցի-պետություն փոխահարբերությունների ուսումնասիրման շրջանակներում կիրառվել է ինստիտուցիոնալ մեթոդը: Չնայած գրականության բավականին մեծ ծավալներին, այնուամենայնիվ թեմայի քաղաքագիտական շրջանակների վերաբերյալ այնքան էլ շատ չեն հեղինակների

կարծիքները: Գիտնականների մեծ մասը հարցին մոտեցել է տարբեր տեսանկյուններից: Մասնավորապես հետազոտության համար հիմք են հանդիսացել այնպիսի հեղինակների գնահատականները, տեսակետներն ու աշխատությունները, ինչպիսիք են Մաքիավելին, Կանտը, Ոլտերը, Ռուսոն, Հոբսը, Դենի Դիդրոն, ԱՄՆ սահմանադրության հայրերը և այլոք:

Հայ հեղինակներից ոչ ոք թեմային քաղաքագիտական տեսանկյունից համալիր, ծավալուն և համընդգրկուն կերպով չի անդրադարձել, առանձին ենթահարցերի կան անդրադարձներ պատմաբանների, մշակութաբանների, հոգևոր դասի ներկայացուցիչների կողմից, որոնց անդրադարձ կատարվել է աշխատանքում: Քաղաքագիտական ուսումնասիրություններում թեմայի ներառումը միտված է հնարավորություն տալ թե՛ մասնագիտական, թե՛ շահագրգիռ շրջանակներին հստակ պատկերացում կազմել ոլորտի հիմնախնդիրների, համագործակցային ուղղությունների, գործնական, տեսական նշանակության մասին:

Բացի դրանից, հետազոտության հիմնական օրինաչափությունն այն է, որ ինդուկտիվ մեթոդաբանությամբ տեսական մոտեցումներից, միջազգային փորձից անցում է կատարվում դեպի Հայաստանի Հանրապետության ներկա հասարակաքաղաքական գործընթացների, իրավիճակի, փոխհարաբերությունների դաշտ: Այլ կերպ ասած՝ առկա ուսումնասիրությունը համադրվում է հեղինակային վերլուծության հետ, որոնք հնարավորություն են տալիս ավելի էմպիրիկ ձևով ներկայացնել ուսումնասիրությունը:

Գիտական հետազոտության շրջանակներում օգտագործվել են ինչպես հատուկ, այնպես էլ ընդհանուր իմացաբանական մեթոդներ, որոնք կիրառվում են տարբեր գիտություններում:

Հետազոտության ժամանակ լայնորեն կիրառվել են այնպիսի ընդհանուր և իմացաբանական մեթոդներ, ինչպիսիք են աբստրակցիան, սինթեզը, անալիզը, դաշտային հետազոտությունը, անհատական հարցազրույցները և այլն:

Լայնորեն կիրառվել է գիտական տեսությունների, դիտարկումների մեթոդաբանությունը, որը հիմնականում իրականացվում է որոշակի վարկածների և տեսությունների ստուգման, հիմնավորման համար, ուստի դիտարկման արդյունքներն էապես կախված են այդ տեսությունների հետազոտությունից:

Ավելին, դիտարկումն աչքի է ընկնում նաև նրանով, որ դրա արդյունքները պահանջում են մեկնաբանություն: Այն իրականացվում է որոշակի վարկածների և տեսությունների միջոցով, ինչը մեզ հնարավորություն է տվել նպատակային տեսանկյունից միմյանցից սահմանազատել հետազոտության համար էական և ոչ էական տեսակետները:

Ցանկացած հետազոտական աշխատանք իրենից ենթադրում է որո-

շակի վարկածային մոտեցում կամ ինչ-որ վարկածի հաստատում կամ մերժում: Ուստի, համընդհանուր մեթոդաբանության շրջանակներում կիրառվել է նաև վարկածի առաջադրման մեթոդաբանությունը:

Ճանաչողության, հատկապես գիտական-ճանաչողության, գիտական հետազոտության գործընթացում, երբ ձևակերպված է հիմնահարցը կամ հիմնահարցերի ամբողջությունը, անհրաժեշտություն է զգացվում փնտրել դրա լուծումը: Որոշ դեպքերում հիմնահարցի լուծումը ենթադրում է նոր դիտարկումների, գիտափորձերի անցկացում, փաստերի որոնում, նոր հայեցակարգային միջոցների առաջադրում:

Ատենախոսության գիտական նորույթը եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների բացահայտման, պետաեկեղեցական հարաբերությունների գործիքակազմում առկա խնդիրների վերլուծության, ազգային անվտանգության հոգևոր անվտանգություն ենթաբաժնում առկա խնդիրների քաղաքագիտական պրիզմայի ներքո պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների ուսումնասիրության առաջին փորձն է հայրենական քաղաքագիտության մեջ:

Աշխատանքի մեջ, որպես գիտական ուսումնասիրության առարկա, առաջին անգամ վեր ենք հանել քաղաքագիտական մտքի պատմության մեջ առկա ուսումնասիրություններն ու մեթոդները եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների մասին, առաջին անգամ եկեղեցի-բանակ համագործակցության շրջանակներում խորը քաղաքագիտական վերլուծության ենք ենթարկել ՀՈՒ հոգևոր առաջնորդության ինստիտուտը՝ դիտարկելով այն որպես հոգևոր ու ազգային անվտանգության ապահովման կարևորագույն օղակ: Ահա թե ինչու մեր ընտրած թեման, որպես ատենախոսության ուսումնասիրություն, իր թե՛ գործնական կիրառելիությամբ թե՛ տեսամեթոդաբանական հիմքով վերոնշյալ հիմնահարցերի շուրջ նորովի գիտական մոտեցում ու անդրադարձ է: Իրականացված հետազոտության արդյունքում առաջ են քաշվել գիտական նորույթ պարունակող հետևյալ դրույթները.

- Մասնագիտական գրականության մեջ առկա սահմանումների ու մոտեցումների, հայեցակարգերի վերլուծության հիման վրա հստակեցվել է եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների մոդելային տիպաբանությունը այնուհետև դրանք դիտարկվել են ժողովրդավարական վարչակարգի ամրապնդման, քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացներում:
- Նորովի են լուսաբանվել հոգևոր անվտանգության մասին առկա հայեցակարգերը և վեր են հանվել նրանց հիմնական առանձնահատկությունները:
- Բացահայտվել է հայաստանյան պետաեկեղեցական հարաբերությունների ՀՀ Երրորդ Հանրապետության մոդելը, առանձնահատկություններ-

ը, զարգացման հիմնական միտումներն ու առկա խնդիրները:

- Հստակեցվել է եկեղեցու արդի գործառույթները պետության և հասարակության փոխհարաբերություններում, վեր են հանվել այն հիմնական խնդիրները, որոնք առկա են պետություն-եկեղեցի համագործակցային հարաբերություններում:
- Իրականացվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության զարգացման միտումներում եկեղեցու դերի վերլուծություն երիտասարդների և հասարակական կազմակերպությունների շրջանում, ինչպես նաև ժողովրդավարության զարգացման գործում եկեղեցու ունեցած գործառույթների շուրջ ուսումնասիրություն:
- Քաղաքագիտական հետազոտությամբ լուսաբանվել է պետության որդեգրած դիրքորոշումը եկեղեցու նկատմամբ, ընդգծվել են խնդիրները, լուծման հեռանկարները, առկա միտումները:
- Բացահայտվել է կրոնական և քաղաքական լիդերների դերի և համագործակցության նշանակությունը պետության, հասարակության կյանքում:
- Վեր է հանվել եկեղեցի-բանակ համագործակցության կիրառական նշանակությունը հոգևոր անվտանգության ապահովման համատեքստում:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների ոլորտն անընդհատ հետազոտվողներից է: Իսկ թեմայի թիրախավորված ուսումնասիրությունը պետության քաղաքական համակարգում և հասարակության կյանքում առանձնացվել է մեր կողմից:

Քաղաքագիտական մտքի ակունքներում եկեղեցի-պետություն փոխհարաբերություններին անդրադարձել են քաղաքական ուսմունքների ներկայացուցիչներ, փիլիսոփաներ Թ. Աքվինացին, Ժ. Մարիտեն, պետության առաջացման և դերի Աստվածաբանական տեսության դասական ընդհանրացումներին կարելի է հանդիպել Հեգելի հիմնավորումներում:[1] Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների քաղաքագիտական դիսկուրսը քննարկելիս կարևոր ենք համարում անդրադարձ կատարել քաղաքական ուսմունքների պատմության միջնադարյան ամենաակնառու մտածողներից մեկի՝ ֆլորենցիացի քաղաքական գործիչ, քաղաքագետ, դիվանագետ, պատմաբան, գրող Նիկոլո Մաքիավելլու քաղաքագիտական դիտարկմանն այս հարցի շուրջ:[2] Ֆրանսիական մատերիալիստ-լուսավորիչները, Վերածնունդի դարաշրջանի

[1] Տե՛ս, Сабо И., Основы теории права. Москва 1974, с. 100-103.
[2] Տե՛ս, Մաքիավելի Ն., Տիրակալը Ալբերտ Բարսեղյանի խմբագրությամբ, Երևան 2010, էջ 78-83.

մտածողները[3] ևս անդրադարձել են պետաեկեղեցական հարաբերություններին: Աշխատանքի մեջ քաղաքական միտքը չի սահմանափակվել միայն եվրոպացի մտածողներով, եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հայեցակարգը անմասն չի մնացել նաև ամերիկացի էնցիկլոպեդիստների տեսություններից: Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների մոդելներն ուսումնասիրել ենք հիմնվելով երկու ինստիտուտների համագործակցության միջազգային օրինակների և փորձի վրա[4]:

Այնուամենայնիվ, շատ քիչ հեղինակներ են պետաեկեղեցական հարաբերությունները ենթարկել քաղաքագիտական հետազոտության: Կարևորելով ամբողջ տեսամեթոդաբանական, պատմական վերլուծություններն ու ուսումնասիրությունները և որոնց մենք անդրադարձել ենք մեր հետազոտության շրջանակներում՝ ցանկանում ենք առանձնացնել, որ սույն հետազոտությունը մնացածներից տարբերվում է նրանով, որ ուսումնասիրության շրջանակն ընդգրկում է բացառապես քաղաքագիտական թեմատիկան, ընդ որում՝ արդի զարգացումների և գործընթացների համատեքստում:

Աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը: Գիտական դրույթները և եզրակացությունները կարող են օգտագործվել, եկեղեցի-պետություն գործընթացների ուսումնասիրության, խնդիրների ընկալման, հոգևոր անվտանգության մարտահրավերների և լուծումների բացահայտման ժամանակակից իրողություններում, հետազոտությունը կիրառելի ուսումնասիրության նյութ կարող է լինել քաղաքագետի, պետական-հասարակական գործչի, ռազմագետի, հոգևորականի, հոգեբանի, փիլիսոփայի համար: Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների ուսումնասիրության ներկայացված գիտական նյութը միտում ունի կարևոր նշանակություն ունենալ թե՛ եկեղեցու, թե՛ պետության համար վերանայելու սեփական դիրքորոշումը, քաղաքականությունը, մի շարք խնդիրների շուրջ գտնելու լուծումներ:

Ատենախոսության եզրակացությունները կարող են օգտագործվել քաղաքագետ, պատմաբան, աստվածաբան ուսանողների համար նախատեսված դասընթացներում, ճեմարանականների, պետական, հասարակական գործիչների համար:

Հետազոտության արդյունքը կիրառելի և հեռանկարային կարող է լինել մի շարք կարևոր հայեցակարգերի մշակման, անվտանգային տիրույթում մի շարք կարևորագույն խնդիրների ուղղությամբ ուշադրություն սևեռելու, կենտրոնացնելու համար:

---

[3] Ключко Б.И., Законодатель в трактате Марсилия Падуанского, «Защитник мира» Вестник СПбГУ. Сер. 2. 2015. Вып. 2, с. 133-140.

[4] Տե՛ս, James E. Wood JrJ. Readings on Church and State, By M. Dawson Institute of Church-State Studies, 1989.

Աշխատանքի թե՛ տեսական, թե՛ կիրառական հատվածները կարող են նաև ներառվել գիտաուսումնական պրակտիկայում՝ հաշվի առնելով այս թեմային առկա դասընթացների շատ հպանցիկ անդրադարձը:

Աշխատանքի փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի կողմից, իսկ դրա հիմնադրույթներն արտացոլված են գրախոսվող պարբերական գիտական հրատարակություններում հրապարակված հեղինակի գիտական հոդվածներում: Ատենախոսության որոշ դրույթներ ներկայացվել են 22.05.2018թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած «Հայաստանը և Հայ Եկեղեցու դերակատարությունը հայոց պետականության կայացման գործում» գիտաժողովին, 15.06.2020թ. տեղի ունեցած «Խորհրդային Հայաստան-100. եկեղեցի և պետություն» գիտաժողով-ցուցահանդեսին:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է հետազոտության նպատակներին և խնդիրներին: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից: Տեքստի ծավալը՝ ներառյալ գրականության ցանկը 162 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են թեմայի նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան: Սահմանվում է աշխատանքի մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև գիտական մշակվածության աստիճանը:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլխից: Առաջին գլուխը վերնագրված է «**Եկեղեցի-պետություն փոխհարաբերության տեսահայեցակարգային հիմքերը, մոտեցումները, մոդելները**»: Առաջին գլխի «**Պետաեկեղեցական հարաբերությունները քաղաքագիտական մտքի ու հայեցակարգերի համատեքստում**» ենթագլխում տեսամեթոդաբանական ուսումնասիրության են ենթարկվել քաղաքական տեսաբանների մոտեցումները, մտքերը, հայեցակարգերը եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների շուրջ, եկեղեցի-պետություն փոխհարաբերության մոդելները, թեմատիկ և գործառութային առանցքային օրինաչափությունները, ինչպես նաև՝ քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական համակարգերի ամրապնդման գործում եկեղեցու դերն ու նշանակությունը: Առաջին գլխին երկրորդ՝ **«Եկեղեցի-պետություն փոխհարաբերության ձևաչափերը»** ենթագլխում ուսումնասիրվել են եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների ձևաչափերը, այդ ձևաչափերի ա-

ռանձնահատկությունները, վերջիններիս կիրառելիության միջազգային փորձը տարբեր երկրների օրինակներով: Առաջին գլխի երրորդ՝ **«Քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում եկեղեցու դերի հարցի շուրջ»** ենթագլխում ուսումնասիրվել է քաղաքացիական հասարակության ձևավորման ու կայացման գործընթացներում եկեղեցու ունեցած դերակատարությունը, սոցիարցումների միջոցով կատարվել է հետազոտություն՝ պարզելու համար, թե ինչքանով են Հայ առաքելական եկեղեցուն ենթակա կառույցներն իրենց համարում քաղաքացիական հասարակության մաս և ազդում ժողովրդավարական գործընթացների վրա:

Ատենախոսության երկրորդ՝ «**Հայ առաքելական եկեղեցու և Հայաստանի Հանրապետության փոհարաբերությունները**» գլխում ուսումնասիրում ենք եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հայաստանյան մոդելը՝ ուշադրություն դարձնելով պատմական փորձի, արդի հարաբերությունների, իրավահարաբերությունների, պետության, հասարակության կյանքում եկեղեցու իրականացրած տարբեր գործառույթների, տարբեր ոլորտներում ունեցած դերի վրա: Վեր են հանվել հայաստանյան ձևաչափի առանձնահատկությունները, կերպափոխման հեռանկարները: Այնուհետև առանձնահատուկ ուշադրություն է դարձվել եկեղեցի-պետություն փոխհարաբերություններին հետհեղափոխական Հայաստանում և խորհրդարանական կառավարման անցման համատեքստում՝ ընդգծվել են մարտահրավերները, խնդիրները, փոխհարաբերությունների զարգացման հեռանկարները: Երկրորդ գլխի առաջին՝ **«Պետություն-եկեղեցի փոխհարաբերությունները Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների շրջանում»** ենթագլխում ուսումնասիրել ենք Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետությունների շրջանում եկեղեցի-պետություն փոխհարաբերության մոդելը, փորձ է արվել հասկանալու՝ թե ինչ դերակատարում են ունեցել այդ հարաբերությունների պետաեկեղեցական արդի հարաբերությունների ձևավորման մշակույթի վրա: Երկրորդ գլխի երկրորդ՝ «Եկեղեցի-պետություն փոխհարաբերության մոդելն ու պետաեկեղեցական հարաբերությունների իրավական կարգավորման հիմնահարցը Հայաստանի Հանրապետությունում» ենթագլխում վերլուծության ենթ ենթարկել եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների արդի մոդելը Հայաստանում, վեր է հանվել երկու ինստիտուտների փոխհարաբերությունների կարգավորման իրավական կարգավորման հիմքերը, իրավական բացերը, խնդիրները: Ատենախոսության երկրորդ գլխի երկրրորդ՝ **«Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների վերանայման հիմնախնդիրները խորհրդարանական կառավարման անցման համատեքստում»** ենթագլխում ուսումնասիրվել է այն արդի գործընթացները, որոնք տեղի ունեցան եկեղեցի-պետություն փոխհարաբերություններում պե-

տակական կառավարման փոխակերպմանը զուգահեռ: Ներկայացվել են եկեղեցու ինստիտուտի շուրջ ծավալված հանրային խնդիրները, ճգնաժամը, պետության վերաբերմունքը, կատարվել է արդիական գործընթացների վերլուծություն, մշտադիտարկում, խնդիրների վեր հանում: Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ՝ **«Հոգևոր առաջնորդների հանդիպումներն ու կրոնական խաղաքարտն Արցախյան հակամարտության համատեքստում»** ենթագլխում ներկայացրել ենք Հայաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդների հանդիպումների վիճակագրությունը, ներկայացվել է եկեղեցու, հոգևոր լիդերների դերն ու նշանակությունը Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գործում: Ենթագլխում առանձին, թիրախային անդրադարձ է կատարվել նաև Արցախյան հակամարտության շուրջ Հայաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդների հանդիպումներին, այդ հանդիպումների արդյունքներին, ակնկալիքներին և նպատակներին: Վերջում ուսումնասիրել ենք Հայաստանում հոգևոր անվտանգության սպառնալիքները՝ համապատասխանաբար առաջարկելով լուծման ուղիներ ու մեթոդներ:

Ատենախոսոսության երրորդ՝ «**Հոգևոր անվտանգության հիմնախնդիրները**» գլխում անդրադարձել ենք հոգևոր անվտանգության հիմնահարցի էությանը, մոտեցումներին, մարտահրավերներին: Ատենախոսությաոն երրորդ գլխի առաջին՝ **«Հոգևոր անվտանգության հայեցակարգը, սահմանումները, հոգևոր անվտանգության հիմնահարցի գիտական ուսումնասիրության մեթոդները»** ենթագլխում անդրադարձ է կատարվել քաղաքագիտության մեջ եղած հոգևոր անվտանգության հայեցակարգի սահմանումներին, ուսումնասիրության մեթոդներին: Երրորդ գլխի երկրորդ՝ **«Հոգևոր անվտանգությունը որպես պետության ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ, հոգևոր անվտանգության հիմնահարցերը պետությունների ազգային անվտանգության ռազմավարական փաստաթղթերում»** ենթագլխում ուսումնասիրվել է հոգևոր անվտանգության դրույթը պետությունների ազգային անվտանգության ռազմավարություններում՝ շեշտը դնելով Հայաստանի Հանրապետության օրինակի վրա, կատարվել է խորը-համապարփակ վերլուծություն, կատարվել են նաև համեմատություններ: Երրորդ գլխի երրորդ՝ **«ԶՈՒ հոգևոր առաջնորդության ՀՀ մոդելը. Եկեղեցի-պետություն համագործակցությունը երկրի ռազմական ոլորտում»** ենթագլխում առանձին անդրադարձ է կատարվել պետության կարևորագույն ինստիտուտներից մեկի՝ բանակի և եկեղեցու համագործակցությանը՝ ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդության օրինակով, թեման ուսումնասիրվել է ՀՀ մոդելի առանձնահատկությունների, ինչպես նաև հոգևոր ու ազգային անվտանգությունների համատեքստում, թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է նաև եկե-

ղեցի-բանակ համագործակցության միջազգային փորձը: Երրորդ գլխի չորրորդ՝ **«ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդության դերն ու նշանակությունը հոգևոր ու ռազմական անվտանգության ապահովման համատեքստում»** ենթագլխում ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդության մոդելը դիտարկվել է երկրի ազգային և ռազմական անվտանգության համատեքստում՝ անդրադառնալով նաև այն հիմնախնդիրներին և համապատասխան լուծումներին՝ որոնք առկա են վերոնշյալ ոլորտում: Երրորդ գլխի հինգերորդ՝ **«Հոգևոր-մշակութային անվտանգության սպառնալիքները Հայաստանի Հանրապետությունում»** ենթագլխում անդրադարձել ենք Հայաստանում առկա հոգևոր անվտանգության սպառնալիքներին՝ համապատասխանաբար առաջարկելով այն լուծումները, որոնք անհրաժեշտ են այդ խնդիրները լուծելու տեսանկյունից:

Եզրակացություններ բաժնում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ ենք համարել առանձնացնել առավել կարևորները՝

1. Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների ուսումնասիրությունը լայնածավալ քաղաքագիտական նյութ է, որը կարևոր է հիմնահարցին այլ ուղղություններից նայելու և պետության ու եկեղեցու հարաբերություններում մի շարք խնդրներ ու դրանց լուծումներ ընկալելու տեսանկյունից: Թեման արդիական է, քանի որ գիտական պատասխան է տրվում մի շարք խնդրահարույց ընթացիկ հարցերի ու խնդիրների:

2. Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հայաստանյան մոդելն առանձնահատուկ է և տարբերվում է ոչ միայն իր պատմական հիմքերով, այլև արդի իրողություններով: Այդ փոխհարաբերությունների և համագործակցության մշակույթը ժառանգվել է անցյալից, սակայն, Հայաստանում նոր հիմքերի վրա են դրվել եկեղեցու ներգրավվածությունը պետության և հասարակության սոցիալական, մշակութային, կրթական, տնտեսական, ինքնության պահպանման, սփյուռքի հետ համագործակցության առումներով:

3. Եկեղեցու և պետության հարաբերություններն ու դիրքորոշումները Հայաստանի Հանրապետությունում չպետք է լինեն կարծրացած և պետք է փոխակերպվեն թե՛ եկեղեցու, թե՛ պետության շուրջ ընթացող առանցքային փոփոխություններին զուգահեռ: Բացի այդ շարունակական կատարելագործման կարիք է զգում երկու ինստիտուտների փոխհարաբերությունների կարգավորման իրավական հիմքը:

4. Եկեղեցի-բանակ համագործակցության հայկական մոդելը առանձնահատուկ է և ստեղծվել է ոչ թե ուրիշ երկրների փորձի, այլ պատմական օրինաչափությունների հիմքերի վրա: Այս ոլոտը շարունակական մասնագիտական կատարելագործման անհրաժեշտություն ունի:

5. Հոգևոր անվտանգության ապահովման, ազգային ինքնության պահպանման, հասարակության հոգևոր-մշակութային արժեքների ձևավորման գլխավոր երաշխիքը համարվում է պետական և եկեղեցական իշխանությունների համակարգված ռազմավարության վարումը, միևնույն ժամանակ կախված այդ հարաբերությունների բնույթից, նշենք նաև որ յուրաքանչյուր երկրում այդ համագործակցությունն ունենում է յուրովի դրսևորում և կախված է տվյալ երկրի ազգային առանձնահատկություններից, պետական կառավարման համակարգի բնույթից:

6. Ցանկացած երկրում եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների էությունը հասկանալու համար կարևոր է ուսումնասիրել իրավունքի աղբյուրները, պետության և եկեղեցու միջև կնքված երկկողմանի փաստաթղթերը, բացի իրավական աղբյուրներից, այս հարաբերությունների ուսումնասիրության համար կարևոր է նաև այնպիսի գործոնների ուսումնասիրությունը, ինչպիսիք են՝ սոցիալական, քաղաքական, մշակութային, տնտեսական ոլորտները, ինչպես նաև կարևոր է անդրադարձ կատարել պատմական նախադրյալներին, անցյալի փորձին ու ներկայի իրողություններին:

7. Ժողովրդավարական արժեքների պահպանման կարևոր ուղղության՝ քաղաքացիական հասարակության կայացման ու զարգացման գործընթացը սերտորեն առնչվում է այնպիսի կարևորագույն ինստիտուտի գործառնության հետ ինչպիսին եկեղեցին է: Հատկապես քրիստոնեական աշխարհում այդ ամենը ցայտուն կերպով դրսևորվում է մարդու սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքում եկեղեցու բազմաբնույթ ներգրավվածությամբ, այլ հարց է, թե ինչ արդյունքի է հասնում, բայց որ կա փոխհամագործակցություն, դա ակնհայտ է:

8. Քաղաքացիական հասարակության կայացումն ու ժողովրդավարական արժեքների պահպանումն ու տարածումը նաև այն կարևորագույն պետական, հասարակական ու հանրային արժեքներն են, որոնց շուրջ եկեղեցին ու պետությունը, որպես տարբեր ինստիտուտներ կարող են թե համագործակցել, թե բախվել, այսինքն քաղաքացիական հասարակությունն ու ժողովրդավարական արժեքների պահպանումը դառնում է այն շրջանակը, որտեղ եկեղեցական ու պետական ինստիտուտների համագործակցությունը, փոխազդեցությունն ու փոխներգործությունն անխուսափելի է: Այսինքն քաղաքացիական հասարակության ինստիտուտն այն դաշտն է, որտեղ հատվում և տրոհվում են պետական և եկեղեցական շահերը ի նպաստ հասարակության բարօրության:

9. Առաջին Հանրապետության տարիներին որոշակի քայլեր արվել է այնուամենայնիվ եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների կանոնակարգման ու հստակեցման համար՝ հատկապես իրավական դաշտում, ո-

րոնք սակայն մնացել են անիրագործելի:[5]

10. Պատմական տարբեր իրադարձություններ ժամանակահատվածի մի շարք վավերագրեր վկայում են հայոց կաթողիկոսի՝ որպես պետության ներկայացուցիչ ունեցած բացառիկ ներկայացուցչական և լիազորությունների ու գործառույթների մասին:[6]

11. Հայ առաքելական եկեղեցու սոցիալական գործունեության և մի շարք ծրագրերի իրականացման մշակույթն ի հայտ է եկել դեռևս Առաջին հանրապետության տարիներին և շարունակական բնույթ կրել ներկայումս՝ եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների հայաստանյան իրողություններում:

12. Ցանկացացած երկում հեղափոխական իրավիճակներն ու հեղափոխություններն առաջ են բերում ճգնաժամեր, որի լուծումը հետագայում կախված է ճիշտ որոշումներից, հասարակական ընկալումներից, գործողություններից, ՀՀ-ում հայ առաքելական եկեղեցու ինստիտուտի շուրջ նմանատիպ մի ճգնաժամային իրավիճակ առաջացավ 2018թ.:

13. Բոլորովին նոր ձևաչափ էր Հայաստանի Հանրապետության և Հայ առաքելական եկեղեցու հարաբերությունները կարգավորող աշխատանքային խմբի ստեղծումը՝ ՀՀ վարչապետի 2019թ. Հունվարի հրամանով, հետաքրքիր էր այնքանով, որ եկեղեցի-պետություն հարաբերությունների կարգավորումը դրվում էր եկեղեցական ու պետական իշխանության ներկայացուցիչների քննարկման սեղանին, որն էլ հետագայում պետք է լուրջ հիմք հանդիսանար մի շարք ծրագրերի, գործողությունների իրականացման համար:

14. Աշխատանքային խմբի ստեղծման այս ձևաչափը կարևոր էր նաև այն տեսնակյունից, որ այն իրավական հիմքով (ՀՀ վարչապետի հրամանով) ստեղծված կառուցողական երկխոսության հարթակ էր, որը հնարավորություն կտար բարձրացնել ցանկացած հստակ հարց, խնդիր, և հանգել եզրակացության կամ գտնել լուծումը:

15. Արցախյան կոնֆլիկտի տարբեր փուլերում Ադրբեջանը բազմիցս փորձել է հակամարտությանը տալ կրոնական իմաստ, իսլամական աշխարհի ուշադրությունը վերջինիս վրա գրավելու համար, սակայն հայ իրականության շրջանակներում երբեք էլ Արցախյան հակամարտությունը չի ընկալվել որպես կրոնական հակամարտություն:

16. Ողջամիտ չի լինի կարծել, որ հոգևոր հիմքերի վրա չխարսխված

---

[5] Խոսքը վերը նշված «Հայաստանյայց առաքելական Մայր եկեղեցուև Հայաստանի Հանրապետության միջև կնքվելիք դաշնագրի նախագծի» մասին է, որն այդպես էլ մնացել է անիրագործելի:

[6] Տե՛ս, Սանդրո Բեյբուրդյան, Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Ե, Երևան 1999, էջ 3

այս հակամարտությունը հոգևոր առաջնորդների լուծելու խնդիրն է, հակամարտության արմատներն ավելի շատ քաղաքական, ազգային, պատմական և իրավական են, սակայն, հաշվի առնելով բոլոր ժամանակներում կրոնական գործոնի չնվազող ազդեցությունը մարդկային կյանքի տարբեր ոլորտների վրա, միանգամայն տրամաբանական և անգամ կենսական նշանակության անհրաժեշտություն է դառնում կրոնական առաջնորդների ներգրավվածությունը խնդրի լուծմանն ուղղված ջանքերում:

17. Հոգևոր անվտանգության հայեցակարգին որպես այդպիսին առանձնահատուկ անդրադարձ չկա ՀՀ ազգային անվտանգության ինչպես հին այնպես էլ նոր մշակված ռազմավարություններում, չնայած որոշակի խնդիրներ շոշափվում են: Ուստի հոգևոր անվտանգության սպառնալիքները միտում ունեն դառնալ ազգային անվտանգության մարտահրավեր:

18. Ազգային անվտանգության մի շարք սպառնալիքների և մարտահրավերների դիմակայելու տեսանկունից կարևոր է պետության երկու կարևորագույն և կայացած ինստիտուտների՝ բանակի ու եկեղեցու ակտիվ համագործակցությունը որակական մակարդակում:

19. Ազգային անվտանգության համատեքստում, պետության հոգևոր ու ռազմական անվտանգության խնդիրների լուծման տեսանկյունից, ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդության ինստիտուտը հանդիսանում է այն կարևորագույն համագործակցային ձևաչափը, որն իր օրինակով ու գործառնական նշանակությամբ եզակի է: Բանակը լինելով փակ կառույց, այնուամենայնիվ եկեղեցուն թույլ է տալիս ներսից ունենալ փոխադարձ ազդեցություն և համագործակցություն իր հետ, ուստի այդ կապը պետք է լավագույնս ծառայի թե՛ եկեղեցու, թե՛ բանակի խնդիրները լուծելու, պետության համար կարևոր նշանակություն ունեցող հոգևոր ու ռազմական անվտանգության մարտահրավերների դեմ համատեղ պայքարելու առումներով:

20. Ուսումնասիրության շրջանակներում հանդես ենք գալիս նաև երկու կարևոր առաջարկությամբ, ՀՀ ԶՈՒ գնդերեցները հիմնականում սարկավագի աստիճան ունեցող հոգևորականներն են, իսկ մենք գիտենք, որ սարկավագները պատարագ մատուցելու իրավունք չունեն, չնայած ժամանակ առ ժամանակ քահանա հայրերի կողմից իրականացվող պատարագների զորամասերում, այնուամենայնիվ սա հաճախակի ու բազմաբնույթ դարձնելու համար, կարծում ենք, որ ճիշտ կլինի ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդության ինստիտուտում ծառայող սարկավագների հետ մեկտեղ որոշակի զորամասերում՝ կապված սահմանային կամ ոչ սահմանային, մեծ կամ փոքր, խնդրահարույց կամ բարդ լինելու հետ, ծառայության ուղարկել նաև քահանա հայրերին, ուստի փորձառության, կարգավիճակի առումով դա ավելի կմեծացնի եկեղեցի-բանակ համագործակցությունն ու շփումը, ինչպես նաև թույլ տալ սարկավագների՝ քահանա դառնալու ճանապարհին անցնի

բանակում և նրանք իրենց ունեցած փորձառությունը շարունակեն զարգացնել և կայացնել ՀՀ Զինված ուժերում: Հաջորդ առաջարկությունը ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդության ինստիտուտի կատարելագործման հետ կապված այն է, որ ՀՀ ԶՈՒ գնդերեցներն անընդհատ վերապատրաստման մասնակցեն և մասնավորապես ռազմական հոգեբանության ոլորտին վերաբերվող թեմաների շրջանակներում, քանի որ բնագավառը սերտորեն առնչվում է վերջիններիս ծառայության հետ:

21. Այսպիսով՝ ՀՀ ազգային անվտանգության հոգևոր բաղադրիչի ապահովման համատեքստում Զինված ուժերում ՀՀ Հոգևոր առաջնորդության առաքելությունը ունի ոչ միայն հոգևոր-կրոնական, այլև բարոյահոգեբանական, գաղափարաբանական-քարոզչական, մշակութային, սոցիալական բովանդակություն: Եկեղեցի–բանակ կապի ամրապնդման, զարգացման, հաստատութենացման ընթացքում ՀՀ ԶՈՒ-ի Հոգևոր առաջնորդությունն ստեղծվել է ոչ թե ներմուծվող կամ պարտադրվող օրինակների ու մոդելների, այլ յուրային պատմական իրողությունների ու փորձի հիման վրա, մի ազգի համար, որը գիտակցված մահի գաղափարը համարում է գերակա արժեքներից մեկը:

22. Հոգևոր-մշակութային դաշտում առկա կարևորագույն խնդիրներից մեկն այն է, որ մի շարք հարցերի լուծման շուրջ եկեղեցին և պետությունը չունեն իրավական կարգավորման դաշտ: Մի շարք խնդիրների լուծման ընթացք բաց է մնում հենց պետության և եկեղեցու միջև մի շարք հարաբերությունների կարգավորման համապարփակ հայեցակարգի բացակայության պատճառով: Խնդրի լուծման միջոց աշխատանքի մեջ առաջարկվում է այն, որ պետության սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման և հասարակաքաղաքական փոփոխությունների հետ միաժամանակ կերպափոխվեն և շարունակական թարմացվեն նաև եկեղեցու և պետության փոխհարաբերությունները՝ նոր մոտեցումներ և մարտավարություն որդեգրելով ի հայտ եկած մի շարք մարտահրավերների դեմ համատեղ գործողություններով դուրս գալու համար: Խոսքը վերաբերում է նաև պետաեկեղեցական հարաբերությունների իրավական կարգավորման արգացմանը: Ուստի այդ հարաբերությունները պետք է գտնվեն շարունակական աճի ու փոփոխության մեջ՝ հետ չմնալ պետության և հասարկության կյանքի զարգացումից:

23. Եթե հոգևոր անվտանգության դոկտրինը բերենք ինդիվիդուալիզմի դաշտ, ապա հոգևոր անվտանգության կարևորագույն հիմնախնդիր է համարվում մարդ-անհատի վարքաբանական, հոգեմտավոր շեղումներն ու խնդիրները: Եթե վերլուծության ենք ենթարկում քրիստոնեության, քրիստոնեական եկեղեցիների գործունեության պատմությունը, ապա կարող ենք նշել, եկեղեցին միշտ զբաղվել է թմրամոլների, հաշմանդամների, ծանր հի-

վանդների, հարբեցողների, հասարակության խոցելի հատվածների, ծնողազուրկների հիմնախնդիրներով, որը միջազգային տերմինաբանության մեջ ստացել է «Եկեղեցու սոցիալական դիակոնիայի ինստիտուտ անվանումը»:[7] Սակայն, այսօր, Հայ առաքելական եկեղեցին չունի սոցիալական գործունեության միասնական հայեցակարգ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ եկեղեցու սոցիալական գործառույթը բավականին ընդգրկուն է և լայն (ՀԱԵ-ն ունի քրեակատարողական հիմնարկների հետ աշխատող հատուկ ստորաբաժանում և համակարգող հոգևորական)[8], ապա առաջարկում ենք մշակել եկեղեցու սոցիալական գործունեության միասնական հայեցակարգ՝ դոկտրին, որը կդառնա եկեղեցու սոցիալական գործունեության համակարգային մեթոդաբանական հիմք՝ ամբողջ սոցիալական գործունեությունը վեր հանելու, խնդիրն ուղենշելու, մատնացույց անելու համար: Հայ առաքելական եկեղեցում անգամ գործում է Սոցիալական ծառայության գրասենյակ ստորաբաժանումը, ինչպես նաև հոգևոր տեսուչ Երևանի Իզմիրլյան բժշկական կենտրոնում:[9]

24. Հոգևոր-մշակութային անվտանգության, ազգային անվտանգության սպառնալիք են համարվում նաև որոշ ՁԼՄ-ներ, տեղեկատվական և հոգեբանական պատերազմները թուլացնում են հասարակության բարոյահոգեբանական, արժեքաբանական մթնոլորտը և հիմք հանդիսանում մի շարք մարտահրավերների ի հայտ գալու համար: Մի շարք հաղորդումներում մակերեսային և կողմնակալ լուրերի, տեսակետների առկայությունը, մեդիա գրագիտության բացակայությունը, կրոնական հարցերի՝ սիրողական մակարդակով լուսաբանումը, ինչպես նաև հասարակական գիտակցության ընկալողունակության ոչ համաչափ արձագանքը հոգևոր անվտանգության համար սպառնալիք են: Ցանկացած կրոնական կազմակերպություն իր դավանանքի հիմնադրույթների, գործունեության և սոցիալական հայեցակարգի մասին պետք է պաշտոնական տեղեկատվություն ապահովի: Խոսքը «մաքուր» տեղեկատվության, այլ ոչ քարոզչական բնույթի նյութերի մասին է:

25. Մշակույթի ոլորտում հոգևոր անվտանգության հիմնախնդիրը տեղեկատվական կապերի նկատմամբ ազգային ու պետական վերահսկողության պահպանումն է: Չի կարելի հանդուրժել, որ օտար մշակույթները սողոսկեն ազգային մշակութային տեղեկատվության շրջանառության և վերարտադրության ոլորտ, աղավաղեն հայոց ավանդական հոգևոր ու բարո-

---

[7] Դիակոնիայի մասին մանրամասն տես http://www.surbzoravor.am/post/view/diakonia-tsarayutyun-patarag-astvatspashtutyun

[8] Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ՔԿՀ հոգևոր սպասավորության բաժին

[9] Հայ առաքելական եկեղեցու կառուցվածքը մանրամասն տես ստորև տեղադրված հղման մեջ http://etchmiadzinlibrary.am/hy/karuycner-ev-bazinner

յական արժեքները: Ազգի հոգևոր-բարոյական անվտանգության տեսանկյունից մշակութային կյանքում առանձնահատուկ կարևորություն ունի տեղեկատվական կապերի շրջանառության կանոնակարգման պետական քաղաքականությունը:[10] Եթե կրոնական կազմակերպությունները լինեն հաշվետու և թափանցիկ, իսկ ՁԼՄ-ները՝ կրոնական և ազգային թեմաների նկատմամբ առանց թշնամանք սերմանելու, իսկ թիրախավորված գործելու առումով՝ ավելի անաչառ ու պրոֆեսիոնալ, ապա կրոնադավանական քաղաքականության պետական հայեցակարգի դրույթները կլինեն հավասարակշռված և հասարակական քննարկումների առարկա դարձած, իսկ հանրային գիտակցությունը կլինի ավելի բարձր և ներդաշնակ ներկա կրոնական իրողություններին:

26. Հաջորդ խորքային խնդիրը, որ հատուկ ուշադրության կարիք ունի, կրոնական օրենսդրության ոլորտում իրավակիրառական պրակտիկայի բարելավումն է: Խնդիրն ունի երկու կողմ՝ կրոնական կազմակերպությունների կողմից իրենց պարտավորությունների, կանոնադրական նպատակների բարեխիղճ կատարման հանդեպ վերահսկողություն և իշխանությունների կողմից քաղաքացիների կրոնական պահանջմունքների, նրանց իրավունքների իրացման հնարավորության և ֆիզիկական ու իրավական պաշտպանվածության ապահովում:

27. Հայ ավանդական եկեղեցիների համատեղ գործողություններն ու համատեղ ծրագրերը պետք է զերծ լինեն կուսակցական ազդեցություններից և հիմնականում նպատակաուղղվեն պետական ու ազգային ծրագրերի իրականացմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հոդվածներում.

1. **Մելիքյան Ս.Մ.**, «Եկեղեցի-պետություն փոխհարաբերության ձևաչափերը», Լրատու Մեսրոպ Մաշտոց Համալսարանի, Երևան 2017թ., էջ 154-159

2. **Մելիքյան Ս.Մ.**, «Հոգևոր առաջնորդների հանդիպումներն ու կրոնական խաղաքարտն Արցախյան հակամարտության համատեքստում», Լրատու Մեսրոպ Մաշտոց Համալսարանի, Երևան 2018թ., էջ 226-231

3. **Մելիքյան Ս.Մ.**, «ՀՀ Զու-ի հոգևոր առաջնորդության դերն ու նշանակությունը հոգևոր անվտանգության ապահովման համատեքստում», ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, Երևան 2019, № 2(100), էջ 74-84

---

[10] Տե՛ս, ԱՄԲԵՐԴ հետազոտական խումբ.
ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի հոգեվոր-բարոյական հիմնախնդիրները, Երևան 2014, էջ 73-74

4. **Մելիքյան Ս.Մ.**, «Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները Հայաստանի առաջին հանրապետությունում և Խորհրդային Հայաստանում (Պատմական ակնարկ) «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն, Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, Երևան 2019, № 4(5)/, էջ 195-203

5. **Մելիքյան Ս.Մ.**, «Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների վերանայման արդի հիմնախնդիրները պետական կառավարման ապարատի փոխակերպման և խորհրդարանական կառավարման անցման համատեքստում», Մեսրոպ Մաշտոց համալսարանի «ԼՐԱՏՈՒ» հոդվածների ժողովածու, Երևան 2019, № 2(2), էջ 172-179

6. **Մելիքյան Ս.Մ** «Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների իրավական կարգավորման հիմնահարցը Հայաստանի Հանրա-պետությունում», «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի Արդարադատություն գիտական հանդես, Երևան 2019, № 3/49, էջ 35-41

7. **Մելիքյան Ս.Մ.**, «ՀՀ ազգային շահի ապահովման հիմնահարցը հարավկովկասյան աշխարհաքաղաքական տարածաշրջանում», ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր 2019, էջ 296-30

SIRANUSH MELIKYAN

CHURCH-STATE RELATIONS IN THE POLITICAL PROCESSES OF THE REPUBLIC OF ARMENIA. ISSUES OF SPIRITUAL SECURITY

Dissertation under 23.00.02" – "Political Institutions and Processes" aspiring to earn PhD in Political Sciences

The public defense will take place on 24 september at at the Yerevan State University, at 056 "Political Sciences" HAC Specialized Chamber session. (Address A. Manukyan str. 1, Yerevan 0025, Republic of Armenia)

Summary

The primary purpose of the present dissertation is the comparative analysis of Armenian model of state-church relations, current processes and problems. The structure of the dissertation corresponds to the purpose and main tasks of the research and consists of introduction, three chapters, conclusion and bibliography.

The Introduction substantiates the topicality, aim and objectives of the theme, academic novelty and the main clauses to be defended. It presents theoretical and practical significance of the dissertation, the degree of academic development of the issue, the object and subject of the research, as well as methodology.

The first chapter of the thesis, **"Conceptual bases, approaches, models of church-state relations""**, consists of three sub-chapters: **"State-church relations in the context of political thought and concepts "**, **"The models of the church-state relationship"** and **"On the role of the church in the process of building civil society"**. In the the first subchapter the origins and evolution of the concept are discussed, crossing points with such categories of political science as church-state relations. Furthermore, various approaches to defining the concept are examined. Second subchapter focuses on typologies of church-state and their peculiarities, as well as the issue of measurement of international experiment. In the third subchapter**,** role of the church in the process of building civil society is analyzed. In this context, theoretical mechanisms are viewed as the main result and logical endpoint of this process.

The second chapter of the thesis, **"Relations between the armenian apostolic church and the Republic of Armenia"** is divided into four subchapters, namely **"State-church relations between the first and second republics of Armenia"**, **"The model of church-state relations and the issue of legal regulation of state-church relations in the Republic of Armenia"**, **"Problems of reviewing church-state relations in the context**

of parliamentary transition", **"Meetings of caring leaders and the religious issue in the context of the Artsakh conflict"**. The first subchapter focuses on State-church relations between the first and second republics of Armenia. In the second subchapter shows the features of the current model, The third subchapter focuses on Problems of reviewing church-state relations in the context of parliamentary transition, The issue is being discussed under current realities. In the last subchapter focused on the impact of meetings of religious leaders.

The third chapter of the dissertation, entitled **"Issues of spiritual security"**, consists of five subchapters, namely **"The concept of security, definitions, methods of scientific research on the issue of security"**, **" The issue of spiritual security issues in the National Security Strategic Documents of the states", "The model of spiritual leadership of the Armed Forces of the Republic of Armenia. Church-state cooperation in the military sphere of the country", "The role and singnificance of spiritual leadership of the Armed Forces of the Republic of Armenia in the context of spiritual and military security", and "Threats to spiritual and cultural security in the Republic of Armenia"**. The first subchapter focuses on various tools of spiritual security, as well as its main drawbacks which are still majorly hindering its efficiency. In the second subchapter The issue of spiritual security issues in the National Security Strategic Documents of the states are discussed, with particular emphasis on religious, cultural and economic factors. The next two subchapter focuses on spiritual leadership of the Armed Forces of the Republic of Armenia, In the last subchapter is presented the issues of security in the Republic of Armenia

The main findings and results of the study are summarized in **the conclusion**.

СИРАНУШ СЕРЕЖЕВНА МЕЛИКЯН

ВЗАИМООТНОШЕНИЯ ЦЕРКОВЬ-ГОСУДАРТСВО В ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССАХ РА: ВОПРОСЫ ДУХОВНОЙ БЕЗОПОСНОСТИ

Резюме

Основная цель данной диссертации - сравнительный анализ армянской модели государственно-церковных отношений, текущих процессов и проблем. Структура диссертации соответствует цели и основным задачам исследования и состоит из введения, трех глав, заключения и библиографии. Во Введении обосновывается актуальность, цель и задачи темы, академическая новизна и основные положения,

подлежащие защите. Представлены теоретическая и практическая значимость диссертации, степень академической проработанности вопроса, объект и предмет исследования, а также методология.

Первая глава диссертации "**Концептуальные основы, подходы, модели церковно-государственных отношений**" состоит из трех подразделов: "**Государственно-церковные отношения в контексте политической мысли и концепций**", "**Модели церковно-государственных отношений**", "**О роли церкви в процессе построения гражданского общества**". В первом подразделе обсуждаются происхождение и эволюция концепции, точки пересечения с такими категориями политической науки, как церковно-государственные отношения. Кроме того, рассматриваются различные подходы к определению понятия. Второй подраздел посвящен типологиям государства и церкви и их особенностям, а также проблеме измерения международного эксперимента. В третьем подразделе анализируется роль церкви в процессе построения гражданского общества. В этом контексте теоретические механизмы рассматриваются как главный результат и логическая конечная точка этого процесса.

Вторая глава диссертации "**Отношения между Армянской Апостольской Церковью и Республикой Армения**" разделена на четыре подраздела: "**Государственно-церковные отношения между первой и второй республиками Армении**", "**Модель церковно-государственных отношений и вопрос правового регулирования государственно-церковных отношений в Республике Армения**" "**Проблемы пересмотра церковно-государственных отношений в контексте парламентского перехода**", "**Встречи неравнодушных лидеров и религиозный вопрос в контексте Арцахского конфликта**". Первый подраздел посвящен государственно-церковным отношениям между первой и второй республиками Армении. Во втором подразделе показаны особенности существующей модели. В третьем подразделе рассматриваются проблемы анализа церковно-государственных отношений в контексте парламентского перехода. Этот вопрос обсуждается с учетом текущих реалий. В последнем подразделе основное внимание уделяется влиянию собраний религиозных лидеров.

Третья глава диссертации, озаглавленная "**Вопросы духовной безопасности**", состоит из пяти подразделов, а именно: "**Понятие безопасности, определения, методы научного исследования по проблеме безопасности**", "**Проблема духовной безопасности в национальной сфере**", "**Стратегические документы государств в области безопасности**", "**Модель духовного руководства**

Вооруженных Сил Республики Армения". Церковно-государственное сотрудничество в военной сфере страны "**Роль и значение духовного руководства Вооруженных Сил Республики Армения в контексте духовной и военной безопасности**" и "**Угрозы духовной и культурной безопасности в Республике Армения"**. Первый подраздел посвящен различным инструментам духовной безопасности, а также его основным недостаткам, которые по-прежнему существенно снижают его эффективность. Во втором подразделе обсуждаются вопросы духовной безопасности в Стратегических документах национальной безопасности государств, с особым акцентом на религиозные, культурные и экономические факторы. Следующие два подраздела посвящены духовному руководству Вооруженных Сил Республики Армения. В последнем подразделе представлены вопросы безопасности в Республике Армения.

В Заключении обобщены основные результаты исследования.